**Արձանագրություն N 3**
**բժշկական սարքավորումների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/320» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

01.09.2022թ.
Ժամը՝ 14:20

Մասնակցում էին
Նիստը նախագահող՝ Ա. Զոհրաբյան
Հանձնաժողովի անդամ Տ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան
Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Յ. Ասատրյան

**Ընթացակարգի շրջանակներում 30.08.2022 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ**

---

1.1 Հաշվի առնելով հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինությունը՝ նիստը նախագահել է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն՝ Ա. Զոհրաբյանը:

1.2 «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/320» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է հետևյալ հարցումը.

**Հարցադրում.**

«1-ին չափաբաժնով պահանջվող թվային շարժական ռենտգեն համակարգի բնութագրում առկա է անճշտություն կախված գեներատորի հզորության և գեներատորի ներկառուցված մարտկոցով աշխատելու ձևակերպումների միջև: Ուզում ենք նշել, որ տվյալ համակարգերի արտադրության մեջ երկարամյա փորձ ունեցող ընկերությունների գերակշիռ մասը չունեն միևնույն ժամանակ 4 կամ 5Կվտ հզորությամբ սնուցման աղբյուր, որը իր հերթին գործարկվում է սեփական մարտկոցների օգնությամբ: Այն համակարգերը, որոնք ունեն ներկառուցված մարկտոցներ, հզորությունը սահմանափակվում է հիմնականում մինչև առավելագույնը 2կՎտ: Սակայն այդ սեգմենտի համակարգերը ունեն շատ սահմանափակ կիրառություն, և որոնց ցածր հզորության գեներատորը թույլ չի տալիս իրականացնել բոլոր օրգան համակարգերի պատշաճ որակով ռենտգեն սկանավորում: Խնդրում ենք խմբագրել և հեռացնել գեներատորի ներկառուցված մարտկոցով աշխատելու վերաբերյալ պահանջը, քանի որ հրավերի պայմանների համակարգային և միաժամանակյա կիրառության դեպքում այն առաջացնում է տեսական հակասություն և գործնականում կիրառման գրեթե անհնարինություն:»

**Պարզաբանում.**

Հաշվի առենելով ներկայացված հարցադրումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի հրավերում կատարել համապատասխան փոփոխություն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 2, դեմ - 0:*

Նիստը նախագահող՝ _____ Ա. Զոհրաբյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Տ. Սարգսյան

Քարտուղար՝ _____ Ա. Համբարձումյան